



Ստյոպա Ռոբերտի Չափինյանը ծնվել է 1976 թվականի դեկտեմբերի 5-ին Տավուշի մարզի Բերդ քաղաքում:

1998-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի «Ընդհանուր տնտեսագիտություն» ֆակուլտետը, ստացել է դիպլոմ «Համաշխարհային էկոնոմիկա» մասնագիտությամբ: 2007-ին, պաշտպանելով թեկնածուական ատենախոսությունը, ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Ստյոպա Չափինյանը 2005-ի հունվարից մայիս ամիսներին անկախ հետազոտական աշխատանքներ է կատարել Բոստոնի Դաշնային Պահուստային Բանկում՝ բանկային իրացվելիության կառավարման թեմայով:

Մասնակցել է նաև մի շարք մասնագիտական դասընթացների, այդ թվում՝ EBRD-ի “Retail Banking Workshop” և “International Trade and Finance”, IFC-ի “Liquidity Risk Training”, իռլանդական IDI Ltd.-ի “Strategy & Management in Banking Program” թեմաներով դասընթացներին: 2015-ի փետրվարին ստացել է ACI դիվիզիոնի քննության գերազանցության վկայական:

Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ստացված վկայականների՝ Ստյոպա Չափինյանն ունի ներդրումային ընկերության և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների, գործադիր տնօրենի տեղակալի, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի, բանկի գործադիր տնօրենի, գործադիր



տնօրենի տեղակալի, տնօրինության անդամի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի կառավարչի պաշտոններում աշխատելու իրավունք:

Ստյոպա Չաքինյանն իր աշխատաքային գործունեությունը սկսել է 2000 թվականի հուլիսի 6-ից՝ աշխատելով «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվի, ներկայիս «Ակրա բանկ» ԲԲԸ, «Արմավիր» մասնաճյուղում որպես վարկային գործակալ: Այնուհետև 2002-ի փետրվարի 6-ից 2003-ի հունիսի 2-ը աշխատել է նույն բանկի «Շիրակ» մասնաճյուղում: 2003-ի հունիսի 2-ին տեղափոխվել է «ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ» կոոպերատիվի կենտրոնական գրասենյակ՝ որպես մեթոդաբանության, վերլուծությունների և ստրատեգիական պլանավորման գծով մասնագետ: 2005-ի հունիսի 1-ին նշանակվել է Ստրատեգիական պլանավորման, վերլուծությունների և ակտիվների ու պասիվների կառավարման (2008-ից Ակտիվների ու Պասիվների կառավարման և վերլուծությունների) բաժնի պետ: 2010-ի հունվարի 1-ից մինչև 2014-ի հունվարի 1-ը ղեկավարել է Ակտիվների ու պասիվների կառավարման և դիվինգի վարչությունը, իսկ 2014-ի հունվարի 1-ից մինչև 2015-ի հուլիսի 27-ը՝ Միջազգային հարաբերությունների և ակտիվների ու պասիվների կառավարման վարչությունը:

2015 թվականի հուլիսի 27-ին Ստյոպա Չաքինյանը նշանակվել է «Ակրա բանկ» ԲԲԸ-ի Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

Ամուսնացած է, ունի որդի և երկու դուստր: